ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
գ. Սայաթ-Նովա, 0236-6-06-90, sayat.nova.81@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 27

14.12.2020թվական

14.12.2020թ-ի ԹԻՎ-08 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով ավագանին

ՈՐՈՇԵՑ

1. 2021թ-ի. տեղական տուրքերի և վճարների տեսակները և դրույքաչափերը սահմանելու մասին
2. 2021թ. Սայաթ-Նովա համայնքի ղեկավարի աշխատավարձի չափի, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակի, հաստիկացուցակի ու դրույքաչափերի և համայնքի մանկապարտեզ ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
3. 2020թ-ի տարեկան գույքագրման արդյունքների մասին:
4. 2020թ-ի համայնքի բյուջեում փոփոխություն կատարելու մասին:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ՝	Դեմ՝	Ձեռնպահ՝
Այվազյան Արարատ			
Այվազյան Ռաֆայել			
Զարգարյան Կամո			
Իվանյան Սևակ			
Խաչատրյան Վլադիմիր			
Պետրոսյան Վազգեն			
Սերոբյան Լևոն			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
գ. Սայաթ-Նովա, 0236-6-06-90, sayat.nova.81@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 28 Ն

14.12.2020թվական

2021Թ.-Ի ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ հոդվածների պահանջներով.

ՈՐՈՇԵՑ

Սայաթ-Նովա համայնքում 2021թ-ի համար սահմանել տեղական տուրքերի և վճարների հետևյալ տեսակները ու դրույքաչափերը.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար.

հիմնական շենքերի և շինությունների համար՝

ա. մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ 7500 դրամ.

բ. սույն կետի .ա ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 15000 դրամ.

- 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 25000 դրամ.

-1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 25000 դրամ.

-3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50000 դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 1500 դրամ,

- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 2500 դրամ:

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 1500 դրամ.

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից՝ նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը:

3) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվություն համար՝ 2500 դրամ.

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար, օրացույցային տարվա համար՝ 150000 դրամ.

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առեւտրի կետերում, կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ 30000 դրամ.

6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առուվաճառք իրականացնելու թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ 25000 դրամ.

7) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար, յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5000 դրամ.
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6500 դրամ.
- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10000 դրամ.
- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 12500 դրամ.
- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 15000 դրամ.
- 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 30000 դրամ.

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար, յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5000 դրամ.

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6500 դրամ.
- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10000 դրամ.
- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 12500 դրամ.
- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 15000 դրամ.
- 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 30000 դրամ.

8) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար, յուրաքանչյուր 175 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

9) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացույցային տարվա համար.

ա. առևտրի օբյեկտների համար՝ 25000 դրամ.

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50000 դրամ.

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ 125000 դրամ.

դ. խաղատների համար՝ 250000 դրամ.

ե. շահումով խաղերի համար՝ 250000 դրամ.

զ. վիճակախաղերի համար՝ 50000 դրամ.

10) համայնքի վարչական տարածքում՝ համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2500 դրամ.
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5000 դրամ.
- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 7500 դրամ.
- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 10000 դրամ.
- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 12000 դրամ.
- 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 20000 դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 200 դրամ.
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 500 դրամ.
- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000 դրամ.
- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2000 դրամ.
- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4000 դրամ.
- 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 7500 դրամ.

11) ավագանու կողմից սահմանված կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ Երևան քաղաքի և միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ.

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1750դրամ.

գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ.

դ. այլ արտաքին գովազդի համար՝ 750 դրամ.

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով.

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով:

12) Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն) որպես օրենքով գրանցված ապրանքային նշան՝ ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ 100000 դրամ.

13) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար, օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ 10000 դրամ.

14) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ 500000 դրամ:

15) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 1250000 դրամ.

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 2500000 դրամ.

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 3500000 դրամ.

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 5000000 դրամ:

3. Հաստատել Սայաթ-Նովա համայնքում 2021թ-ի համար սահմանված հետևյալ տեղական վճարների տեսակները և դրույքաչափերը.

1). Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարություն փաստագրելու համար , մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման համար վճար սահմանել 10 000դրամ

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 10 000դրամ

3) Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում, անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար, մատուցման ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 5000դրամ

4). Համայնքի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար 2 000դրամ

5) Համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 4000դրամ

6)համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար 500 դրամ փոխհատուցման վճար.

7). Բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում կոշտ կենցաղային թափոնների համար աղբահանության վճար ըսահմանվում է՝

1) ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական հիսուն ՀՀ դրամ:

2) ըստ բնակելի շինության կամ բնակարանի ընդհանուր մակերեսի՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ հինգից մինչև քսանհինգ Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում աղբահանության վճարը սահմանվում է ըստ շինության ընդհանուր մակերեսի հետևյալ դրույքաչափերով.

1) առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների մատուցման շենքերի և շինությունների մասով՝ մեկք առակուսի մետր մակերեսի համար՝ հիսունից մինչև հարյուր Հայաստանի Հանրապետության դրամ.

2) հյուրանոցային տնտեսության օբյեկտների, տրանսպորտի բոլոր տիպերի կայանների (ավտոկայանների, օդանավակայանների, երկաթուղային կայարանների), հանգստյան տների, բազաների ու ճամբարների, սպորտի համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ քսանից մինչև հիսուն Հայաստանի Հանրապետության դրամ.

3) վարչակառավարչական, ֆինանսական, կապի, ինչպես նաև առողջապահության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ տասնհինգից մինչև քսան Հայաստանի Հանրապետության դրամ.

4) գիտական, կրթական և ուսումնական նշանակության, սոցիալական ապահովության, մշակույթի, արվեստի, կրոնական, պաշտամունքային, քաղաքացիական պաշտպանության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ երեքից մինչև տասնհինգ Հայաստանի Հանրապետության դրամ, իսկ զորանոցների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ ութ Հայաստանի Հանրապետության դրամ.

5) արտադրական՝ արդյունաբերական և գյուղատնտեսական նշանակության շենքերի և շինությունների մասով (այդ թվում՝ ավտոկայանատեղի)՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ հինգից մինչև տասնհինգ Հայաստանի Հանրապետության դրամ.

6) շինություններում, որտեղ իրականացվում է մեկից ավելի առանձնացված տնտեսական գործունեություն, աղբահանության վճարը հաշվարկվում է յուրաքանչյուր հատվածի համար՝ ըստ տվյալ հատվածում իրականացվող գործունեության տեսակի, համաձայն սույն մասի 1-5-րդ կետերով սահմանված դրույքաչափերի, եթե աղբահանության վճար վճարելու պարտավորությունունեցող անձը դրա մասին գրավոր տեղեկացնում է համայնքի ղեկավարին՝ կցելով նշված հատվածների մակերեսների նշումով սխեման, իսկ համայնքի ղեկավարին չտեղեկացնելու դեպքում հաշվարկվում է սույն մասի 1-5-րդ կետերով սահմանված դրույքաչափով.

7) շինություններում (այդթվում՝ առանձնացված տնտեսական գործունեության համար նախատեսված շինությունների առանձին հատվածներում), որտեղ որևէ գործունեություն մշտապես կամ ժամանակավորապես չի իրականացվում, աղբահանության վճարչի հաշվարկվում, եթե շինությունում մշտապես կամ ժամանակավորապես որևէ գործունեություն չիրականացնելու վերաբերյալ աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին տեղեկացնում է համայնքի ղեկավարին, իսկ համայնքի ղեկավարին չտեղեկացնելու դեպքում հաշվարկվում է սույն մասի 1-5-րդ կետերով սահմանված դրույքաչափով:

2.1. Շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, ծառայությունների մատուցման վայրերի մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ հիսունից մինչև հարյուր Հայաստանի Հանրապետության դրամ:

2.2. Շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, կենցաղային ծառայությունների մատուցման վայրերում, որտեղ որևէ գործունեություն մշտապես կամ ժամանակավորապես չի իրականացվում, աղբահանության վճար չի հաշվարկվում, եթե շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, ծառայությունների մատուցման վայրերում մշտապես կամ ժամանակավորապես որևէ գործունեություն չիրականացնելու վերաբերյալ աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին տեղեկացնում է համայնքի ղեկավարին:

3. Ոչ կենցաղային աղբի համար, ինչպես նաև ոչ բնակելի տարածքների վերաբերյալ սույն հոդվածի 2-րդ մասի 1-5-րդ կետերով սահմանված դրույքաչափերի հետ անհամաձայնության դեպքում աղբահանության վճարը սահմանվում է՝

1) ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ երեք հազար Հայաստանի Հանրապետության դրամ, կամ

2) ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ տասը հազար Հայաստանի Հանրապետության դրամ.

3) ոչ բնակելի նպատակային նշանակության շենքի և (կամ) շինության սեփականատերը անհամաձայնության մասին գրավոր ներկայացնում է համապատասխան համայնքի ղեկավարին կամ սույն օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված անձանց՝ աղբահանության ծառայությունների մատուցման պայմանագիրը կնքելուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում:

3.1. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված շենքերի, շինությունների և տարածքների մասով աղբի հեռացման հարաբերությունները կարգավորվում են աղբահանության ծառայություն մատուցող և ստացող կողմերի միջև կնքված պայմանագրով:

4. Աղբահանության վճար սահմանելու համար կիրառվող մեթոդները և աղբահանության վճարի դրույքաչափերը յուրաքանչյուր համայնքի համար սահմանվում են համայնքի ավագանու՝ օրենքով սահմանած կարգով՝ սույն հոդվածի 1-3-րդ մասերով սահմանված դրույքաչափերի սահմաններում:

9) սահմանել համայնքի տարածքում անասնաբույժի կողմից մատուցվող վճարովի անասնաբուժական ծառայությունների առաջարկվող ցանկը և գնացուցակը՝

1.Կենդանիների հիվանդությունների բուժման ,կանխարգելման հարցերով խորհրդատվություն - 500 դրամ

2. Ծննդօգնություն
   1.թեթև միջամտություն - 1000 դրամ
   2. ծանր միջամտություն - 5000 դրամ

3. Վարակիչ հիվանդությունների նկատմամբ կենդանիների կենդ./ - 100 դրամ/ մանր

իմունականխարգելիչ պատվաստումներ և արյունառում կամ կենդ./ - 200 դրամ /խոշոր

յլ նմուշառում կախված կենդանուտեսակից /բացառությամբ <<գյուղատնտեսական կենդանիների պատվաստում>> պետական ծրագրում ընդգրկված հակաանասնահամաճարակային միջոցառումների/ - 200 դրամ

4. Կենդանիների արտաքին և ներքին մակաբույծների դեմ պայքար

5. Ախտահանություն -1քառ. մետր 200 դրամ

6. միջատազերծում / դեզինսեկցիա/ - 1քառ. մետր 100 դրամ

7. Կրծողների ոչնչացում / դեռատիզացիա / - 1 քառ. մետր 200 դրամ

8. Արհեստական սերմնավորում -5000 դրամ

9. Կենդանու հերձում - 1000 դրամ / մանր կենդ./
– 3000 դրամ / խոշոր կենդ./

10. Կենդանուբուժում /յուր. այցելություն / - 1000 դրամ

11. Կենդանիների նախասպանդային զննում -1000 դրամ/ մանր կենդ./
- 2000 դրամ / խոշորկենդ./

12. Կենդանիների հետսպանդային զննում /մինչև 2018թ. հուլիս/ -1000դրամ/ մանր կենդ./
2000/դրամ/խոշորկենդ/

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ՝	Դեմ՝	Ձեռնպահ՝
Այվազյան Արարատ			
Այվազյան Ռաֆայել			
Զարգարյան Կամո			
Իվանյան Սևակ			
Խաչատրյան Վլադիմիր			
Պետրոսյան Վազգեն			
Սերոբյան Լևոն			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ստանի Հանրապետության Արարատի մարզի
այաթ-Նովա, 0236-6-06-90, sayat.nova.81@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 29 Ն

14.12.2020թվական

2021Թ. ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՉԱՓԻ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԱՑԻՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման Մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 11-րդ և 28-րդ կետով ավագանին

ՈՐՈՇԵՑ

Հաստատել Սայաթ-Նովա համայնքի ղեկավարի աշխատավարձի չափը, համայնքապետարանի աշխատակիցների թվաքանակը հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը և համայնքի մանկապարտեզ ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հետևյալ ձևով՝

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ /ՀՀ ԴՐԱՄ/ Հազ.դրամ
Համայնքի Ղեկավար		270.0
Հայեցողական պաշտոններ		
Համայնքի ղեկավար տղակալ	1	150.0
Համայնքային ծառայության պաշտոններ		
Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար /1.2-1/	1	220.0
Համայնքապետարան իաշխատակազմի գլխավոր մասնագետ /2.3-1/	1	190.0
Համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ /3.1-1/	1	170.0
Համայնքապետարանիաշխատակազմի 1-ին կարգի մասնագետ /3.2-1/	1	150.0
Համայնքապետարանի աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետ /3.3-1/	1	135.0
Քաղաքացիական աշխատանք		
Գրադարանավար	1	90.0
Անասնաբույժ	0.5	90.0
Տեխսպասարկման անձնակազմ		

Հավաքարար	1	90.0
Պահակ	3	90.0

ՀՀ Արարատի մարզի Սայաթ-Նովա համայնքի մանկապարտեզ ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրուքաչափերը:

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ /ՀՀ ԴՐԱՄ/ Հազ.դրամ
Մանկապարտեզի տնօրեն	1	135000
Մանկապրտեզի դասատիրակ	3X1,1	105000
Դաստիրակի օգնական	3X1	95000
Խոհարար	1	95000
Երաժիշտ	0.75	105000
Բուժքույր	0.75	128000
Հաշվապահ	0.5	105000
Տնտեսվար	0.5	120000
Ֆիզկուլ հրահանգիչ	0.75	95000
Խոհարարի օգնական	0.5	95000
Պարուսույց	0.25	95000
Օժանդակ բանվոր	0.5	120000
Հավաքարար	0.5	95000

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ՝	Դեմ՝	Ձեռնպահ՝
Այվազյան Արարատ			
Այվազյան Ռաֆայել			
Զարգարյան Կամո			
Իվանյան Սևակ			
Խաչատրյան Վլադիմիր			
Պետրոսյան Վազգեն			
Սերոբյան Լևոն			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
գ. Սայաթ-Նովա, 0236-6-06-90, sayat.nova.81@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 30

14.12.2020թվական

2020Թ-Ի ՏԱՐԵԿԱՆ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 32 կետի պահանջներով ավագանին

ՈՐՈՇԵՑ

Հաստատել 2020թ. գույքագրման արդյունքները համաձայն հավելվածների
Հիմնական միջոցներ՝ 253 237 875 դր:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ՝	Դեմ՝	Ձեռնպահ՝
Այվազյան Արարատ			
Այվազյան Ռաֆայել			
Զարգարյան Կամո			
Իվանյան Սևակ			
Խաչատրյան Վլադիմիր			
Պետրոսյան Վազգեն			
Սերոբյան Լևոն			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
գ. Սայաթ-Նովա, 0236-6-06-90, sayat.nova.81@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 31Ն

14.12.2020թվական

2020Թ-Ի ՀԱՄԱՅՆՔԻ ՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով ավագանին

ՈՐՈՇԵՑ

Վարչական բյուջեի ջրամատակարարում 6.3.1 հատվածի 4212 /էներգետիկ ծառայություններ/ հոդվածը պակասեցնել 55000/ հիսուն հինգ հազ./ դրամով և այն ուղղել 6.4.1 /արտաքին լուսավորության ցանցի հիմն,/ հատվածին 4212 /էներգետիկ ծառայություններ/ հոդվածը ավելացնել 55000/ հիսուն հինգ հազ./ դրամով

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ՝	Դեմ՝	Ձեռնպահ՝
Այվազյան Արարատ			
Այվազյան Ռաֆայել			
Զարգարյան Կամո			
Իվանյան Սևակ			
Խաչատրյան Վլադիմիր			
Պետրոսյան Վազգեն			
Սերոբյան Լևոն			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ